

## Տ. ԹՈՎՄԱ ՔԱՀԱՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
(ավազանի անունը՝ Վահան)

Ծնվել է 1956 թ. սեպտեմբերի 27-ին Երևանում:

1963-1973 թթ. սովորել է Ավ. Իսահակյանի անվան թիվ 16 միջնակարգ դպրոցում:

1973-1977 թթ. սովորել և ավարտել է Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի մշակույթի ֆակուլտետի ռեժիսորական բաժինը:

1980-1984 թթ. աշխատել է Հենրիկ Մալյանի ղեկավարած կինոդերասանի թատրոն-ստուդիայում որպես դերասան և երաժիշտ:

1984 թ. աշխատել է Մոսկվայի «Աոլեկին» թատրոն-ստուդիայում որպես կիթառահար:

1985-1987 թթ. աշխատել է «Փոս» թատրոնում որպես կոնցերտմեյստեր և երգահան:

1987-1999 թթ. աշխատել է Պետական հեռուստատեսությունում որպես ռեժիսոր: Հաղորդումներում հանդես է եկել նաև որպես հաղորդավար, սցենարիստ, խմբագիր, երաժշտական ձևավորող:

1999-2000 թթ. աշխատել է «Պրոմեթևս» հեռուստատեսությունում որպես ռեժիսոր, հաղորդավար:

Հեղինակ է բանաստեղծական հետևյալ չորս ժողովածուների.

1993 թ. - Բանաստեղծություններ: Առաջին գիրք:

1996 թ. - Օրհնյալ լինես, փառապանք:

1999 թ. - Թիթեռների աշխարհում. Դատաստան:

2003 թ. - Ասպետական օրագիր կամ Պատերազմ, դարձյալ պատերազմ:

Մի շարք բանաստեղծություններ ֆրանսերեն է թարգմանել Վահե Գոդելը:

Ունի հեռուստապատեսային ֆիլմեր, որոնցում արծարծվել են ժամանակի սոցիալական, բարոյական, մշակութային ու հոգևոր կարևոր խնդիրներ («Շեմին», «Դրախտ կորուսյալ»):

2002-2004 թթ. սովորել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի քահանայից պատրաստման լսարանում:

2004 թ. հոկտեմբերի 10-ին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, ձեռամբ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Ունի չորս զավակ: